Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 4(19/20)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի 17.12.19 թ.կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 35 անդամներից 30 -ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ՝

1. **Ֆակուլտետի դեկան՝ ֆ.մ.գ.դ.,պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանի տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:**

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..

Լսեցին- Ֆակուլտետի դեկան՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանի տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ. Ներկարարյանը բացեց խորհրդի նիստը: Նիստը նախագահելու համար բաց քվեարկությամբ միաձայն ընտրվեց կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ. Հարությունյանը:

Ռադիոֆիզիկայի Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ. Ներկարարյանը զեկուցեց 2018-2019 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ: Զեկուցողը մանրակրկիտ ներկայացրեց այդ ժամանակահատվածում ուսումնական, գիտական, մեթոդական և կազմակերպչական ուղղությամբ ֆակուլտետում կատարված աշխատանքները, նշեց ձեռքբերումներն ու հրատապ լուծում պահանջող խնդիրները: Մասնավորապես նշվեց, որ Ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 347, որից 287-ը սովորում են բակալավրիատում, իսկ 60-ը՝ մագիստրատուրայում: Առաջին կուրս ընդունվել են 103 դիմորդ, որից 63-ը՝ ռադիոֆիզիկա, 21-ը՝ կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա և 19-ը՝ հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում ուղղություններով: Դասախոսական հաստիքների ընդհանուր քանակը՝ ներառյալ ժամավճարները 24 է, այդ թվում՝10-պրոֆեսոր, 13-դոցենտ, 4 ասիստենտ և 2 դասախոս:

Նշվեց նաև, որ ֆակուլտետում հաջողությամբ գործում է աշխարհում տարածված փոքր սեմինարների եղանակը: Դա հետազոտությունների որոշակի ուղղությամբ զբաղվող գիտնականների, ասպիրանտների և ուսանողների աշխատակարգ է, երբ ի մի է բերվում նախորդ շաբաթվա ստացված արդյունքներն ու նախանշվում են հաջորդ շաբաթվա անելիքները:

Նշվեց նաև, որ ֆակուլտետում ակտիվ գործում է ուսանող-գործատու անմիջական կապը ի դեմս «Սինոփսիս Արմենիա» և «Ucom» ընկերությունների:

Ելույթ ունեցողը միաժամանակ պատասխանեց ներկաների կողմից առաջադրված հարցերին:

Արտահայտվեցին.- ամբիոնների վարիչներ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյանը և պրոֆեսոր Կ.Մ.Ղամբարյանը, կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պատվավոր

վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ. Հարությունյանը, պրոֆեսորներ Գ.Ս. Հաջյանը, Յ.Հ. Ավետիսյանը, Ա.Ա. Հախումյանը և այլ աշխատակիցներ: Արտահայտվողները դրական գնահատական տվեցին դեկան Խ.Վ. Ներկարարյանի մեկ տարվա գործունեությանը և բարձրացրեցին իրենց հուզող հարցերը:

Համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Գ. Գևորգյանը նույնպես դրական գնահատելով դեկանի մեկ տարվա գործունեությունը, մանրամասն պատասխանեց նաև ներկաներին հուզող հարցերին:

Ասվեց, որ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում կատարված աշխատանքները ուսումնական, գիտական ու կազմակերպչական ոլորտներում, ֆակուլտետի հաջողությունները հիմք են տալիս դրական գնահատել դեկանի գործունեությունը և հավանություն տալ հաշվետվությանը:

Որոշեցին.- Բաց քվեարկության հիման վրա միաձայն հավանություն տալ դեկան Խ.Վ. Ներկարարյանի հաշվետվությանը՝ 2018-2019 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և դրական գնահատել այդ ժամանակահատվածում նրա գործունեությունը:

Օրակարգը սպառված է:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝ **Խ.Վ. Ներկարարյան**

Գիտքարտուղար **Հ.Ա. Ճահինյան**